

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

մշակութաբան, ձեռագրագետ,
ՄՄ անվան Մալենադարանի կրտսեր գիտաշխատող
էլփոստ՝ satenikgrigoryan04@gmail.com

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդաձոր գյուղում են գտնվում տպագիր Սաղմոսարանը (թվագրված 1804-1806թթ.) և տպագիր Ժամագիրքը (1856թ.): Երկու գրքերն էլ պատկանում են միևնույն ընտանիքին՝ Գրիգորյաններին: Գրիգորյանների ընտանիքը սերում է Արևմտյան Հայաստանի Մուշ գավառից: Հայերի տեղահանության ժամանակ (1828-1829թթ.) ընտանիքի նախահայրը՝ Ալեքսանը, Սաղմոսը տեղափոխում է Վարդաձոր: Ավելի ուշ որդին՝ Գրիգորը (գյուղի քահանան), ձեռք է բերում տպագիր երկրորդ գիրքը՝ «Ժամագիրքը»: Ընտանիքի անդամները հավատացած են, որ գրքերը (հատկապես Սաղմոսարանը) օժտված են յուրահատուկ ուժով և պաշտպանում են վրանգներից: Ներկայումս գրքերը գտնվում են Հմայակ Նազարյանի կրտսեր որդու՝ Լևիկ Գրիգորյանի և նրա կնոջ՝ Լիանա Գրիգորյանի պաշտպանության ներքո:

Տպագիր Սաղմոսարանը հավանաբար թվագրվում է 1804 կամ 1806 թվականներով: Տիրույթների և այլ օրինակների բացակայության պատճառով հնարավոր չեղավ տպագրության ճշգրիտ ամսաթիվն ու վայրը որոշելը: Հաշվի առնելով տպագրության դեկորատիվ մոտիվներն ու տպագրական առանձնահատկությունները՝ գիրքը հավանաբար տպագրվել է Կոստանդնուպոլսում: Այն պարունակում է նկարազարդումներ՝ տառեր, գլխազարդեր, բուսական նախշազարդեր, ավելարանական թեմաներով պատկերներ:

Ժամագիրքը 1865 թվականին Թիֆլիսի Գ. Էնֆիճյանի տպարանում տպագրված գրքերից մեկն է: Մոտ 720 էջանոց գիրքը պարունակում է բուսական զարդանախշեր, վերջնազարդեր: Մինչ օրս (23.01.2024) գրքից միայն մեկ օրինակ պահվում է Սանկտ Պետերբուրգի (Ռուսաստանի Դաշնություն) Ազգային գրադարանի հայերեն տպագիր գրքերի հավաքածուի ֆոնդում:

Բանալի բառեր՝ Գեղարքունիքի մարզ, Վարդաձոր գյուղ, Արևմտյան Հայաստան, Մշո գավառ, Գրիգորյան ընտանիք, Սաղմոսարան, Ժամագիրք, Թիֆլիս, զարդամոտիվներ, Կոստանդնուպոլիս:

Անառարկելի է գրքի և գրավոր մշակույթի բացառիկ դերը հայ ժողովրդի կյանքում: Հայերեն առաջին գրքի տպագրումից ի վեր (1512-1513թթ.) ձեռագրերի ստեղծմանը զուգահեռ տպագրվել են պատկառելի թվով հայերեն գրքեր: Տպագիր գրքերի անցած ճանապարհը բազմազան է: Դրան նպաստող գլխավոր հանգամանքներից մեկը հայ տպագիր գրքի՝ հիմնականում հայրենիքի սահմաններից դուրս ստեղծված լինելն է: Կարելի է փաստել, որ հայ տպագիր գիրքը ժառանգել է ձեռագիր գրքի ճակատագիրը՝ իր հանգրվանը գտնելով աշխարհի տարբեր հաստատություններում՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, Մխիթարյան միաբանության Վենետիկի և Վիեննայի վանքերում, Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքում, Զմմառի վանքում, Հայաստանի Ազգային գրադարանում, օտարերկրյա մի շարք կենտրոններում, գյուղերում, համայնքներում և առանձին անհատների մոտ: Վերոբերյալ աշխատանքում տեղ գտած տպագրերը ևս երկարուժիգ ճանապարհ անցնելուց հետո վերջնական հանգրվանն են գտել Վարդաձորում:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր գյուղը գտնվում է պատմական Մեծ Հայքի Սիսական (Սյունյաց) նահանգի Գեղարքունյաց գավառում՝ Գեղամա՝ լեռների ստորոտում՝ Սևանա լճից երեք կիլոմետր դեպի արևմուտք՝ Երանոս և Ձորագյուղ գյուղերի հարևանությամբ: Գյուղի նոր պատմության սկիզբ, թերևս, կարելի է համարել 1830-ական թվականները: Ռուս-թուրքական պատերազմից հետո սկսվում է արևմտահայերի զանգվածային տեղահանությունը (1828-1829թթ.) Արևելյան Հայաստան: Բնակչության մի փոքր մաս՝ 28 ընտանիք², բնակություն է հաստատում Վարդաձորում: Այժմյան Վարդաձոր գյուղը առանձնահատուկ է իր պատմական շերտերով, հնամենի հուշարձաններով, առանձին անհատների պատկանող ձեռագրերի և տպագիր գրքերի կարևոր հավաքածուներով: Դրանց՝ ձեռագիր և հնատիպ Հմայիլների, տպագիր Ավետարանների, Սաղմոսարանների, Շարակնոցների, Ժամագրքերի և այլնի շարքում հայտնաբերվել են տպագիր գրքերի բացառիկ օրինակներ, որոնցից ամենահինը՝ տպագիր Սաղմոսարանը, ներկայումս (23.01.2024թ. դրությամբ) եզակի միավոր կարող ենք համարել, երկրորդը Ժամագիրք է, որի ևս մեկ օրինակ գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս՝ Սանկտ

¹ Հ. Գրգեարյան, Ն. Հարությունյան, *Աշխարհագրական անունների բառարան (Ա-Կ)*, Երևան, 1987, էջ 105:

² Ըստ Ի. Շոպենի՝ Վարդաձորում հաստատված ընտանիքների թիվը 28-ն է, ընդհանուր՝ 169 շունչ. 101-ը՝ տղամարդ, 68-ը՝ կին: Բնակչության թիվը աճել է՝ 1939թ.՝ 1750, 1959թ.՝ 1404, 1970թ.՝ 1999, 1979թ.՝ 2404, 1989թ.՝ 2277 մարդ, 2011թ.՝ 2864 բնակիչ: Տե՛ս **И. Шопен, Исторический памятникъ состояния Армянской области въ эпоху ея присоединения къ Россійской-имперіи**, Санкт-Петербургъ, 1852, с. 595-598, **Վ. Ավետիսյան, Վարդաձոր: Գյուղի պատմություն**, Երևան, 2008, էջ 13-24, **Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**, հ. 4 (Ն-Վ), Երևան, 1998, էջ 775:

Պետերբուրգի Ազգային գրադարանում¹: Ուստի Հայաստանի տարածքում հայտնաբերված 1865թ. տպագրված սույն ժամագիրքը ևս կարելի է դասել նորահայտ օրինակների շարքին:

Վարդաձոր գյուղի բնակիչ Լևիկ (Յուրիկ) Գրիգորյանի ընտանիքին են պատկանում երկու տպագրերը՝ հավանաբար 1804-1806թ. Սաղմոսարանը և 1865թ. ժամագիրքը²: Ըստ Համայակ Նազարյանի (Լևիկ Գրիգորյանի հոր)՝ իրենց նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Մշո գավառից 1828-1830-ական թվականներին: Նախապապը՝ Ալեքսանը, տեղահանության շրջանում Վարդաձոր է տեղափոխել տպագիր Սաղմոսարանը (1804-1806թ.): Ավելի ուշ Սաղմոսարանը փոխանցել է միակ որդուն՝ Գրիգոր քահանային, որը տպագիրը փոխանցել է ավագ որդուն՝ Սահակին, նա էլ ժառանգել է իր ավագ որդուն՝ Նազարին: Նազարը (իր ազգանունը բխեցրել է հոր անունից և կոչվել Սահակյան) քահանա է եղել և ավելի ուշ իր հարուստ գրադարանը համալրել է ևս մեկ տպագրով՝ 1865թ. ժամագրքով: Երկու տպագիր գրքերը փոխանցել է ավագ որդուն՝ Գեղամին, որի մահից հետո այս արժեքավոր գրքերը ժառանգել է կրտսեր որդին՝ Համայակը (Համայակ Նազարյանը ազգանունը բխեցրել է պապի անունից): Այժմ տպագիր միավորները գտնվում են Համայակ Նազարյանի կրտսեր որդու՝ Լևիկ Գրիգորյանի³ և նրա տիկնոջ՝ Լիանա Գրիգորյանի պահպանության ներքո: Ընտանիքի որոշմամբ, ժառանգության ընդունված կարգի համաձայն, տպագիր գրքերը փոխանցվելու են միակ որդուն՝ Համլետ Գրիգորյանին և նրա տիկնոջը՝ Ալյոնա Սահակյանին՝ եկող սերունդներին ապահով փոխանցելու ակնկալիքով:

¹ Գիրքը գտնվում է Ս. Պետերբուրգի Ազգային գրադարանի հայ տպագիր գրքերի ֆոնդում, ուր տեղափոխվել է Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան պետական գրադարանից: Տե՛ս **Ն. Ոսկանյան, Ա. Սավալյան, Մ. Սողոմոնյան, Օ. Գյուլումյան, Ա. Սահակյան, Ա. Թադևոսյան, Հայ գիրքը 1851-1900 թվականներին**, Երևան, 1999, էջ 111, հմր. 1406:

² Տպագրերը բացարձակ նշանակություն ունեն ընտանիքի անդամների համար: Նրանց խորին համոզմամբ երկու գրքերն էլ, հատկապես 1804-1806թ. թվագրվող Սաղմոսարանը, օժտված են յուրահատուկ զորությամբ: 1940-50-ական թթ. ընտանիքը ապրել է կիսագետնափոր տնակում, մինչ 1976թ. կկառուցվեր առանձնատունը: Ազգանուշ տատը գիրքը վնասումից պահելու նպատակով (տանիքը վնասված է եղել և հաճախ կաթել է) ցանկացել է տեղափոխել այն ավելի ապահով վայր՝ ընտանիքի անդամների որոշմամբ հանձնվել է Ս. Էջմիածին: Սակայն ընտանիքի անդամներից մեկին սուրբը երազում հայտնել է, որ Սաղմոսարանը պիտի վերադարձվի և դրվի նախկին տեղում: Տան անդամների խնդրանքով այն վերադարձվել է, իսկ նրա մուգ շագանակագույն կազմին փայտյա խաչ է փակցվել:

³ Լևիկ Գրիգորյանը և եղբայրները իրենց ազգանունը բխեցրել են նախապապի՝ Գրիգորի անունից և գրվել Գրիգորյան: Երախտիքս եմ հայտնում Գրիգորյան ընտանիքին, մասնավորապես Ալյոնա Սահակյանին՝ տոհմաձառի վերաբերյալ ունեցած ողջ տեղեկությունը ինձ սիրով հաղորդելու համար:



Նկ. 1. Սաղմոսարան,
Կ. Պոլիս, 1804-1806 թթ.



Սաղմոսարան,
Կ. Պոլիս, 1804-1806 թթ.
(կազմերես)

Սաղմոսարան կամ «Երգարանաց Դավթի» (ըստ տպ. հիշատակարանի): Սաղմոսարանը բաղկացած է 360 զարդափակ էջից: Էջերի մեծությունը 15,2×10,7 սմ է, գրության միասյուն շարվածքով՝ 12×7 սմ: Տողերի քանակը 22-24-ի է հասնում (նկ. 1): Տիտղոսաթերթի բացակայության պատճառով չենք կարող ստակ մատնանշել



Նկ. 2. Սաղմոսարան, Մկրտություն, գլխագիր, Կ. Պոլիս,
1804-1806 թթ., էջ 38-39



Նկ. 3. Սաղմոսարան, Խաչելություն, բուսական գլխազարդ, մարդ-վիշապ զարդագիր, Կ. Պոլիս, 1804-1806 թթ., էջ 160-161




Նկ. 4. Սաղմոսարան, Հոգեգալուստ, գլխազարդ, բուսական լուսանցազարդ,

տպագրության տարերթիվը: Սակայն, զարդամոտիվների և նկարների ձևավորման առանձնահատկությունները, ինչպես նաև տպագրության հիշատակարանը թույլ են տալիս հստակեցնել, որ տպագրության վայրն է Կ. Պոլիսը¹ (նկ. 2): Համաձայն գրքի վերջում առկա տոմարական աղյուսակի՝ 1805թ., հավանական է՝ այն տպագրված լինի 1804 կամ 1806թթ. (ընդունված է նմանատիպ գրքերի վերջում առկա աղյուսակում նշված տպագրության տարերթվին գումարել կամ հանել մեկ տարի): Թուղթը՝ լուսագծերով և լուսադրոշմով՝ երեքնուկով պսակված գծային խաչ: Գրությունը միասյուն է: Գրադաշտն առնված է ուղղանկյուն զարդանախշի մեջ: Գիրը հիմնականում բոլորգիր է: Սկզբնատողերը՝ յուրահատուկ գլխազերծով (նկ. 3): Կաշվեկազմ է՝ մուգ

¹ Շնորհակալությունս եմ հայտնում Մատենադարանի գրադարանի վարիչ Տաթևիկ Ղազումյանին՝ գրքի մասին որոշ տեղեկությունները հաղորդելու համար: Շնորհակալություն նաև Մատենադարանի ձեռագրատան վարիչ ա. գ. թ. Դավիթ Ղազարյանին՝ որոշ պատկերների անվանումներ հստակեցնելու համար:



Նկ. 5. Սաղմոսարան, Քրիստոսի տոհմածառ, բուսական գլխազարդ,



Նկ. 6. Սաղմոսարան, տպագրության հիշատակարան, Կ. Պոլիս, 1804-1806 թթ.

շագանակագույն կաշի, Ա. փեղկին ավելի ուշ՝ սոսնձված փայտյա խաչ: Միջուկը՝ տախտակ, աստառը՝ թուղթ: Կազմը, մեջքի վերին և ստորին եզրերը մաշված են, վերին հատվածում ունի բացակա մաս (նկ. 1): Լուսանցակողերի կարմիր ներկանյութը մասամբ գունաթափ է: Որոշ էջերին նկատելի են կաթիլների հետքեր: Ա. կազմաստառի վերին անկյունը, տիտղոսաթերթը՝ պատռված ընկած: Թ. 3-9՝ ստորին

անկյունը՝ բացակա, թ. 360 ստորին, թ. 33, 26, 239 հիմքից ամբողջովին պոկված է: Սաղմոսարանի ընդհանուր վիճակը կարելի է գնահատել բավարար:


Սաղմոսարանի բնագրի սկսվածքը՝ մարդ, մարդ-վիշապ, թռչուն-ծուկ զարդամոտիվներով: Գլխագրերը առնված են ուղղանկյան մեջ, ներսում՝ բուսական նախշեր: Որոշ գլխագրերի հետին ֆոնին՝ եկեղեցու, խորանի, մարդու պատկերներ՝ Ադամ և Եվա՝ «Մեղսագործություն»՝ էջ 263 (նկ. 4): Գրքում կան զարդամոտիվներ՝ բուսական լուսանցազարդեր, բուսական գլխազարդեր, վերջնազարդեր և ավետարանական դրվագների պատկերներ՝ մկրտության, հարության, խաչելության, հայտնության և այլ տեսարաններով՝ «Մկրտություն» (էջ 38), «Հոգեգալուստ» (էջ 78), «Մոգերի և հովիվների երկրպագություն» (էջ 122), «Խաչելություն» (էջ 160), «Քրիստոսի

Գիրքը բաղկացած է Դավթի Սաղմոսներից, աղոթքներից, օրինություններից, մաղթանքներից. սկսվում է Դավթի Սաղմոսներով և ավարտվում «Գովասանութիւն



Սաղմոսացն Դաթօի: Դրան անմիջապես հաջորդում է սաղմոսների ցանկը՝ «Ցանկ սաղմոսաց՝ ըստ կարգի այբուբենից», «Օրհնութիւնք», «Եօթն Սաղմոսք

ապաշխարութեան», որն ավարտվում է բուսական վերջնազարդով: Վերջում կանոնիկ դարձած տպագրության հիշատակարանն է՝ «Շնորհիւ եւ ողորմությամբ ամենագորին Աստուծոյ՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ եւ բարեխօսությամբ տիրամօրն լուսոյ՝ սուրբ Աստուածածին: Ցանկ ելեալ ասարտեցաւ սուրբ մատեանս Երգարանաց Դաւթի՝ աստուածահայր մարգարէին: Արդեամբ և գոյիք տէր Պօղոս խոհեամմիտ քահանայի՝ եղբօրորդոյ Զաքարիա հանգուցեալ պատրիարգի ազգասէր կոչեցելոյ: Ուրեմն յիշեսցի՛ք ի մաքուր յաղօթս ձեր նախ ըզՇնորհք Մկրտիչ Ամիրայն հանդերձ իւր նընջեցելովքն եւ կենդանեօքն, որ զտէր զնա (°) յնարեաց ի դպրատանս Հայոց, որոյ /// օրհնութեամբ եղիցի: Ապա յիշեսցիք զվերոգրե[ա]լ տէր Պօղոս, իւրայնովքն հանդերձ, երրորդ՝ յիշեսցիք զՄուրադ Ամիրայն շնորհեան ըզՄիսթավելլին դպրատանս, եղբարքն իւրով՝ Մանուէլ եւ Քերօբէ պայազատիք, որոյ խնամարկութեամբն կառավարի դպրատունս այս: Այլև յիշեսցի՛ք զտիրագու Մարտիրոս



Նկ. 8. Ժամագիրք,
տիտղոսաթերթ,
Տսիխս (Թիֆլիս), 1865 թ.

431

տպագիր հիշատակարանի՝ գրքի տպագրիչն է տիրացու Մարտիրոսը: Այն տպագրվել է հանգուցյալ Զաքարիա պատրիարքի եղբորորդու՝ տեր Պողոս քահանայի հովանավորությամբ: Գիրքը տպվել է Կ. Պոլսի Մայր Դպրատան տպարանում, որի պատասխանատու վարիչն էր տիրացու Մարտիրոսը (Մայր դպրատան տպարանը գործածվել է մոտավորապես 1792-1798թթ. և 1805-1823թթ.)¹ (նկ. 6):

Ամփոփենք. խնդրո առարկա Սաղմոսարանը (30.01.2024թ. դրությամբ) հայ տպագիր գրքի դեռևս անհայտ օրինակ է, որը բացակայում է «Հայ գիրքը» մատենագիտության մեջ: Երկար պրպտումների արդյունքում դեռևս չենք հայտնաբերել

այդ գրքի որևէ այլ օրինակ, ուստի այն կարելի է դասել հայերեն տպագիր գրքերի նորահայտ անունների շարքին: **Ժամագիրք**²: Հայ եկեղեցու ժամագիրքը կազմավորվել ու կարգավորվել է գրերի գյուլից (405թ.) անմիջապես հետո (նկ. 7): Առաջին անգամ հայ եկեղեցի ներմուծեցին և որոշ առումներով հայացրին Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցն ու իրենց ավագ աշակերտները՝ թարգմանական աշխատանքների շարքին դասելով նաև Ժամագիրքը: Հայոց ժամագրքերի երգերի ամենամեծ մասը Ներսես Շնորհալու



Նկ. 9. Ժամագիրք, կնքադրոշմ, Տփխիս (Թիֆլիս),

հորինածներն ու գրածներն են՝: Դրանով է պայմանավորված ժամագրքի տիպոլոգիայի հիշատակվող Սուրբ Սահակի, Սուրբ Մեսրոպի, ինչպես նաև նրանց աշակերտներ Սուրբ Գյուլս Արահեզացի, Սուրբ Հովհան Մանդակունի


¹ Մայր դպրատան գործունեության մասին տեղեկությունը ըստ Ցեղասպանության թանգարարան-ինստիտուտի, Մաշտոցյան մատենադարանի գիտաշխատող, մատենագետ, թարգմանիչ Միհրան Մինասյանի:

² Ժամագիրքերը եկեղեցական արարողությունների ժամանակ կատարվող և երգվող աղոթքների, մաղթանքների, երգեր ու սաղմոսներ պարունակող ժողովածուներ են, որոնք ներառում են նաև քարոզներ, Հին և Նոր Կտակարանների ընթերցվածներ: Այն Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու ամենավաղ և ամենաշատ գործածվող ծիսամատյաններից է, որի մեջ ամփոփվում է մեծ մասամբ ժամերգությունների կատարման կարգը, իսկ հնում այն ծառայել է նաև որպես դասագիրք: Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 402-403:


³ Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ-Ս. Ղազար, 1873, էջ 444-445, **Խ.**

Յարութիւնեան, Ներսէս Շնորհալու կամ նրան վերագրուող շարականները, Մատենագիրք Հայոց, հ. ԻԱ., ԺԲ. դար՝ Ներսէս Շնորհալի, Գիրք Ա., Երևան 2018, էջ 965-966:

կաթողիկոսների և Ներսես Շնորհալի հայրապետի անունները: Նշված ժամագրքի



Նկ. 10. Ժամագիրք, բուսական գլխագարդ,



Նկ. 11. Ժամագիրք, վերջնագարդ խաչ, Տփխիս (Թիֆլիս),

տիրոջ անուններին ևս

հիշատակված են վերոբերյալ անունները: «Ժամագիրք

Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ» խորագիրը կրող սույն ժամագիրքը դասվում է Տփխիսում (Թիֆլիս)՝ 1865թ. Հ. Էնֆեաճյան² տպարանում լույս տեսած հայերեն գրքերի շարքին (նկ. 8): Այսպիսով, տպագրիչ Հ. Էնֆեաճյանի տպարանի թողարկած 170 գրքերին գումարվեց ևս մեկը: Շուրջ 720


էջից (ներկայումս՝ 716 էջ) բաղկացած տպագիրը 17,5×11 սմ մեծության է: Գրությունը միասյուն է՝ 13,8×8-9 սմ: Շարադրանքը հիմնականում բոլորգիր է, գլխագրերը՝ ընդգծված մուգ սև թանաքով: Միջուկը՝ տախտակ, կազմը՝ մուգ շագանակագույն կաշի: Տողերի քանակը միջինում՝ 17-20: Տպագիրը վնասվել է գործածությունից: Ժամագրքի կազմը հետագայում նորոգվել է 2000-ականներին Համայնակ Նազարյանի թոռան՝ Կարեն Գրիգորյանի միջոցներով, փոխա-

¹ Թիֆլիսում առաջին հայկական տպարանը հիմնադրվել է 1823 թ.: Տպարանի գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Պատմական տեսություն սկզբից մինչև XX դարը, Երևան, 1958, էջ 220-224, 246:

² «Հ. Էնֆեաճյանց և ընկերություն» տպարանը հիմնադրել է 1860թ. Թիֆլիսում Հ. Էնֆեաճյանը: Սկզբնական փուլում տպարանը ունեցել է «Մելքումյան-Էնֆեաճյան» անունը, կարճ ժամանակ անց՝ «Էնֆեաճյան և ընկ.»: 1880-ականներին այս տպարանն անցել է Մ. Ռոստինյանցին, որը հաջողությամբ շարունակել է տպագրական գործը մինչև դարավերջ: Տե՛ս Գ. Լևոնյան, նշվ. աշխ., էջ 226:

դրոշմագարդ եղած լինի, ներկայինս հարթ մակերես ունի): Մաշվածության հետևանքով լուսանցակողերի կարմիր գունաներկը մասամբ թափված է, սևացած, որոշ հատվածներում՝ փոխարինված կապույտ թանաքով (էջերի մի մասին նկատելի են կապույտ թանաքի հետքեր): Աստառը, տիտղոսաթերթը, որոշ էջեր՝ 1-10, 107-108, 684-687, 697-698, 706-712, 714, 717-720 բացակայում են, իսկ 715-716 էջերը՝ հիմքից ամբողջովին պոկված: Թերթերին առկա են կեղտաբծեր, թանաքի, խոնավության հետքեր: Չնայած եղած որոշ փոփոխությունների՝ *Ժամագրքի ընդհանուր վիճակը* գնահատվում է բավարար (նկ. 10):

Ժամագիրքը տպագրական զարդամոտիվներով է: Տիտղոսաթերթին՝ տպարանի



Նկ. 12. Ժամագիրք, կնքադրոշմ, Տփխիս (Թիֆլիս), 1865 թ., էջ 683

շրջանակ, եզրերում՝ «Յովհաննէս քահանա Տէր Գրիգորյան», կենտրոնում՝ գավաթանման պատկեր՝ վրան թագ, մեջտեղում՝ «1837» (նկ. 9): Էջ 683՝ սև շրջանակ, վերին և ստորին եզրերին՝ նախշ, ներսում՝ հրեշտակ (”), անընկալելի պատկեր (նկ. 12):

Գիրքը պարունակում է ամբողջական Ժամագիրքը: Այն ավարտվում է ցանկով՝ «Ցանկ գրոց», Հայոց կաթողիկոսների ցանկով՝ «Դասակարգութիւնք Կաթողիկոսացն Հայոց. սկսեալ յառաջին կաթողիկոսէն Հայոց ի սրբոյն Գրիգորէ Լուսատրչէն մինչեւ յաւուրս մեր ի տէր Մատթոս Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց», որին հաջորդում է «Խրատ Տօմարական աղիւսակիս» և ավարտվում «Տօմարական աղիւսակ»-ով: Ժամագրքի տիտղոսաթերթն ընկած է: Սանկտ Պետերբուրգի Ազգային գրադարանի օրինակի թվային պատճենի հիմամբ հնարավոր եղավ վերականգնել անվանաթերթի

բուսագարդ կնիք, ունի էջախորագրեր, նախշագարդ, սակավաթիվ բուսական գլխագարդեր (էջ 3, 137, 158, 199, 311, 323, 335, 337, 359, 372, 384, 403, 504, 549, 602, 637), միջնագարդեր (էջ 160-163, 166-167, 174-175, 182-187, 192, 198, 280-281, 290, 428-429, 446 և այլուր), բուսական վերջնագարդեր (էջ 198, 358, 336, 371, 402, 495, 503, 548, 601, 636 և այլուր), մեկ վերջնագարդ խաչ՝ էջ 383 (նկ. 11): 699 էջին տպարանի կնիք է, որին հաջորդում են ցանկեր: Էջերից երկուսին կան անհատ անձանց կնիքներ՝ էջ 635՝ սև

գրությունը՝ [Ժամագիրք Հայաստանեայց ս[ուրբ] եկեղեցւոյ արարեալ սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ, եւ երանելի հայրապետացն մերոց՝ Գիտոյ եւ Յովհաննու Մանդակունւոյ, եւ սրբոյն Ներսիսի Շնորհալոյ: Ի հայրապետութեան Տ. Տ. Մատթէոսի աստուածընտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց: Տփլիս, 1865-ՌՅԺԴ., Ի տպարանի «Հ. Էնֆիաճեանց եւ ընկերութեան»] (տե՛ս նկ. 8):

Արձանագրենք. Գրիգորյաններին պատկանող երկու տպագիր գրքերը բացառիկ օրինակներ են, որոնց համեմատական քննությամբ պարզվեց դրանց դեռևս անհայտ միավորներ լինելը: Նորահայտ տպագրերից թվագրությամբ առաջինը՝ Սաղմոսարանը, բացակայում է «Հայ գիրքը» մատենագիտութեան մեջ, երկրորդից միայն մեկ օրինակ պահպանված է Ս. Պետերբուրգում: Այս միավորները լրացնում են մինչ այս եղած տպագիր Ժամագրքերի և Սաղմոսարանների շարքը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ալիշան Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ-Ս. Ղազար, 1873:
2. Ավետիսյան Վ., Վարդաձոր: Գյուղի պատմություն, Երևան, 2008:
3. Գրգեարյան Հ., Հարությունյան Ն., Աշխարհագրական անունների բառարան (Ա-Կ), Երևան, 1987:
4. Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Պատմական տեսություն սկզբից մինչև XX դարը, Երևան, 1958:
5. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4 (Ն-Վ), Երևան, 1998:
6. Յարութիւնեան Խ., Ներսէս Շնորհալու կամ նրան վերագրուող շարականները, Մատենագիրք Հայոց, հ. ԻԱ., ԺԲ. դար՝ Ներսէս Շնորհալի, Գիրք Ա., Երևան, 2018:
7. Ոսկանյան Ն., Սավալյան Ա., Սողոմոնյան Մ., Գյուլումյան Օ., Սահակյան Ա., Թադևոսյան Ս., Հայ գիրքը 1851-1900 թվականներին, Երևան, 1999:
8. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002:
9. Шопен И., Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской-империи, Санкт-Петербург, 1852, с. 595-598.

THE SAMPLES OF RARE OLD PRINTED BOOKS

GRIGORYAN SATENIK

Culturologist, Calligrapher,

Junior Researcher of Matenadarana after Mesrop Mashtots

¹ Երախտագիտությունս եմ հայտնում Ս. Պետերբուրգի ազգային գրադարանի տնօրինությանը տպագրի որոշ թվային պատճեններ տրամադրելու համար: Տե՛ս նաև Ն. Ոսկանյան, Ա. Սավալյան, Մ. Սողոմոնյան, Օ. Գյուլումյան, Ա. Սահակյան, Ս. Թադևոսյան, նշվ. աշխ. էջ 111, հմր. 1406:

A printed Psalter dating from 1804-1806 and a printed Horologion dating to 1856 are located in the village of Vardadzor, Geghark'unik' province of the Republic of Armenia. Both belong to the Grigoryan family. The family originates from the province of Mush, Western Armenia. In 1828-1829, during the period of deportation of the Armenians, the family's forefather, Alexan, moved the Psalm book to Vardadzor. Later his son, priest Grigor acquired the printed Horologion. The family members believe that these books (especially the Psalms) are endowed with specific power and protect against dangers. Currently the books are kept in the family of Hamayak Nazaryan's youngest son, Levik Grigoryan and his wife, Liana Grigoryan.

The printed Psalter probably dates from 1804-1806. Because of the lack of a title page, as well as other copies, it is impossible to determine the exact date and place of printing. Given the decorative motifs and printing features of the book, it was probably printed in Constantinople. The engraving is distinguished by illustrations: capitals, lyres, floral patterns, ornaments and images of scenes from the Gospels.

The Horologion is one of the books published by Enfiachyan's printing house in Tiflis in 1865. The book consists of about 720 pages; it contains herbal ornaments and headings. As of now (23.01.2024), only one copy of this Horologion is kept in the Armenian printed books collection of the National Library in St. Petersburg.

Keywords: *Gegharkunik province, Vardadzor village, Western Armenia, province of Mush, Grigoryan family, Psalms, printed Horologion, Tiflis, decorative motifs, Constantinople.*

УНИКАЛЬНЫЕ ОБРАЗЦЫ ПЕЧАТНЫХ КНИГ

ГРИГОРЯН САТЕНИК

Культуролог, рукописовед

Младший научный сотрудник Матенадарана имени Месропа Маштоца

электронная почта: satenikgrigoryan04@gmail.com

Печатная Псалтырь (датируемая 1804-1806гг.) и печатный Часослов (датируемый 1856г.) находятся в селе Вардадзор Гегаркуникского района РА. Обе книги принадлежат одной семье – Григорьянам. Семья Григорьянов родом из провинции Муш в Западной Армении. Во время депортации армян в 1828-1829гг. предок семьи Алексан перевез Псалтырь в Вардадзор. Позже его сын Григор, священник села, приобрел вторую печатную книгу – Часослов. Члены семьи верят, что эти книги (особенно Псалтырь) обладают особой силой и защищают от

опасностей. В настоящее время книги находятся у младшего сына Амаяка Назаряна, Левика Григоряна и его жены Лианы Григорян.

Печатная Псалтырь вероятно датируется 1804 или 1806 годом. Отсутствие титульного листа и других экземпляров не позволили определить точную дату и место печати. Судя по декоративным мотивам и особенностям оттиска, вероятно, книга была напечатана в Константинополе. Она содержит иллюстрации: буквицы, лиры, детали растительных узоров, изображения на евангельские темы.

Часослов является одной из книг, изданных в типографии Г. Энфицьяна в Тифлисе в 1865г. Объём книги составляет около 720 страниц, и её оформление включает растительные орнаменты. На сегодняшний день (23.01.2024г.) единственный экземпляр данного Часослова хранится в коллекции фонда армянских печатных книг Национальной библиотеки Санкт Петербурга РФ.

Ключевые слова: Гегаркуникская область, село Вардадзор, Западная Армения, провинция Муш, семья Григорянов, Псалмы, Часослов, Тифлис, декоративные мотивы, Константинополь.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 21.06.2024թ.:

Հոդվածը գրախոսվել է 27.06.2024թ.:

Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: